ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

22.05.2015թ.
249-ի 1

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի թիվ 175-7 հարցմանն ի պատասխան Երեւանի քաղաքապետարանը հայտնել է (պատասխան գրությունը կցվում է), որ Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրն ընդգրկվել է Երեւանի քաղաքապետարանի սոցիալ-զարգացման 2012-2015թ.թ.-ի ծրագրում, որով նախատեսվել էր հանրակրթական, հատուկ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների անմխիթար վիճակում գտնվող շենքերի հիմնանորոգումը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Հիմնանորոգվե՞լ է արդյոք Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրի շենքը, եթե ոչ, ապա ե՞րբ է նախատեսվում իրականացնել հիմնանորոգում,
2. Իրականացվե՞լ է արդյոք Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրի ներքին վերանորոգում (կոսմետիկ, սանհանգուցների վերանորոգում եւ այլն), եթե ոչ, ապա ե՞րբ է նախատեսվում իրականցնել,
3. Արդյոք կրթահամալիրի հին դպրոցական կահույքը (դպրոցական նստարաններ, պահարաններ, գրատախտակներ և այլն) փոխվե՞լ է նորով (կամ վերանորոգվել), եթե ոչ, ապա ե՞րբ է նախատեսվում,
4. Կառուցվե՞լ է արդյոք ջեռուցման ընդհանուր համակարգ (կաթսայատուն կամ ջեռուցման կաթսաներ կամ օդորակիչներ կամ էլեկտրական վառարաններ կամ այլ), եթե այո, ապա ի՞նչ համակարգ,
5. Եթե սոցիալ-զարգացման 2012-2015թ.թ.-ի ծրագրով նախատեսված՝ կրթահամալիրի հիմնանորոգումը (վերոնշյալ աշխատանքներից որեւէ մեկը կամ որոշները) չի իրականացվել, ապա խնդրում ենք հայտնել, թե ինչու՞:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան